ԳՈՒՄԱՐՆԵՐ ՇՈՐԹԵԼՈՒ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Posted on December 5, 2015 by Keghart

keghart.com

Category: Opinions

Համո Մոսկոֆյան, Բեյրութ, 4 Դեկտեմբեր 2015

Անցած տարի, Սիրիա և Լիբանան կատարած այցի օրերին, Հ.Հ. Ազգային Ժողովի պատգամաւորները հանդիպումներ ունեցան երկու երկրների ղեկավար անձանց, հայ կուսակցութիւնների և կազմակերպութիւնների առաջորդների, Լաթաքիա և այլ վայրեր ապաստանած քեսաբցիների հետ՝ առաջարկելով Մայր Հայրենիքի օգնութիւնը։ Շնորհակալութեամբ ընդունելով ներգաղթի ու մարդասիրական օգնութեան հրաւէրներն ու քայլերը, «աւանդական» կուսակցութիւնների ներկայացուցիչները զգուշացրեցին ռազմական միջամտութեամբ Քեսաբը ազատագրելու փորձերը, վախենալով թե կարող են ինքնասպանական գործողութիւններ տեղի ունենան Մերձաւոր Արևելքի հայկական համայնքներում, արիւնախում ԴԱԵՇի, Ջեբհեթ էլ-Նուսրայի և թրքական հետախուզութեան գործակալների կողմից։

Համո Մոսկոֆյան, Բեյրութ, 4 Դեկտեմբեր 2015

Անցած տարի, Սիրիա և Լիբանան կատարած այցի օրերին, Հ.Հ. Ազգային Ժողովի պատգամաւորները հանդիպումներ ունեցան երկու երկրների ղեկավար անձանց, հայ կուսակցութիւնների և կազմակերպութիւնների առաջորդների, Լաթաքիա և այլ վայրեր ապաստանած քեսաբցիների հետ՝ առաջարկելով Մայր Հայրենիքի օգնութիւնը։ Շնորհակալութեամբ ընդունելով ներգաղթի ու մարդասիրական օգնութեան հրաւէրներն ու քայլերը, «աւանդական» կուսակցութիւնների ներկայացուցիչները զգուշացրեցին ռազմական միջամտութեամբ Քեսաբը ազատագրելու փորձերը, վախենալով թե կարող են ինքնասպանական գործողութիւններ տեղի ունենան Մերձաւոր Արևելքի հայկական համայնքներում, արիւնախում ԴԱԵՇի, Ջեբհեթ էլ-Նուսրայի և թրքական հետախուզութեան գործակալների կողմից։

Այս բոլորը սակայն, չգոհացրեց Սփիւռքի և Մայր Հայրենիքի, քեսաբահայութեան որոշ տարրերին, որոնք ցանկանում էին վրէժխնդիր լինել հայկական Կիլկիայի վերջին աւանի ռմբակոծման, ալան-թալանի և տեղահանութեան համար, թուրքմէն, չէչէն, գնչու և այլ վայրագ ցեղերի աւազակների կողմից։ Մինչ այդ՝ Բէյրութում, Դամասկոսում, Եգիպտոսում յայտնուած «Հայ Իրաւաբանական խորհուրդ»ը, իբր թե Սիրիայի կազմից Թուրքիային դատի տալու և այլ պատճառաբանութիւններով, այցելեց և հանդիպումներ ունեցաւ հայկական Սփիւռքի թե արաբական երկրների մի շարք ղեկավարների հետ, իրենց կազմում ունենալով Վահէ Մանջիկյանին (Դամասկոս) և Սիլվա Կերչեկեանին (Բէյրութ)։ Նրանց միջոցով է որ Սիրիական բանակի հետախուզութիւնը և Լիբանանեան «Հոզբոլլա»ն կազմեցին «Հայոց Վահան» («Ալ Տորի ալ-Արմանի) ռազմական ջոկատը, երկու տասնյակ հայ երիտասարդներից, որոնք վերաոյիշեալ ուժերի, Ալեքսանտրեթի «Սանճագ»ի ալևիների հայազգի ռազմա-քաղաքական ղեկավար Միհրան Ուրալի առաջնորդութեամբ՝ մասնակցեցին հայկական Քեսաբի ազատագրութեան։

Այդ առիթով, Հայաստանից, ազատ կամքով, Լիբանանով Սիրիա անցան հայրենասէր, «ցեղակրօն» մի քանի երիտասարդներ, իսկ Իսպանիա-Մադրիդից, բազմաթիւ ծեքծեքումներից յետոյ՝ Արթուր

Վարդանեանը։ Մինչ այդ Արեւմտեան Հայաստանի ինքնահռչակ նախագահ Արմենակ Աբրահամեանը (ֆինանսաւորուած շվեյցարահայ «Ազգային Փրկիչ» Վարդան Արմաքելի կողմից), ժամանեց Քեսաբ, ուղեւորուելով Ֆրանսիայից, իսկ իր հակառակորդը՝ ինքնահռչակ վարչապետ Արեւմտեան Հայաստանի Արամ Մկրտչեանը Գերմանիայից, «Սոսե Մայրիկ Անի» Սիլվա Կերչեկեանը, սկսեցին համացանցային յայտարարութիւնների մի խայտառակ պայքար՝ հոխորտալով որ իրե՛նք են ազատագրել Քեսաբը... 20 զինեալ հայերով։ ... Իրականում, ճիշդ է, որ ինչպէս «Հոզբոլլա»ի հայկական բաժնի ղեկավարներ յայտնեցին՝ հայերը շատ լաւ են կռուել, բայց 15,000 Սիրիացի բանակայիններ ահեղ մարտերից յետոյ միայն Սիրիային վերադարձրեցին հայկական երբեմնի ծաղկուն աւանը։

Որպէս «սրտի խօսք», այդ հերոս տղաներին նուիրեցի յօդուածներից մէկը, յոյս ունենալով որ նրանք կը կազմեն կորիզը՝ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան, նախկին վանեցի, այժմ Իրաքեան Քուրդիստանի լեռներում թէ Քոբանիում մարտնչող հայազգի առիւծների հետ։ Դժբախտաբար սակայն, պարզուեց թէ թափուած արիւնը վերածուել է բիզնեսի, Սփիւռքից թէ Ռուսաստանից մեծահարուստ հայերից հսկայական գումարներ շորթելու նոր վտանգաւոր արկածախնդրական, կեղծ-յեղափոխական «շարժումներ»ի կողմից...։

Երեւան են եկել նորաթուխ, համացանցային "Ասլան"ներ, որոնց հեղինակները գաղափար անգամ չունեն թէ 70-ական թթ.-ի հայ-ազգային ազատագրութեան պայքարի ետին էին կանգնած պաղեստինեան յեղափոխութեան և Լիբանանի հայրենասիրական ճակատի անմահ ղեկավարները և այդ զոհուած հրաշալի ազատամարտիկների յիշատակը վերածուել էր անամօթ առեւտրի, «Դոն Կիշոդական» սպառնալիքների արիւնախում Թուրքիայի դէմ, առանց նկատի առնելու թէ ստի ու կեղծիքի վրայ այդ սպառնալիքները ինչպիսի՞ վտանգաւոր հետեւանքներ կարող են ունենալ Հայաստանի թէ Սփյիւռքի գաղթօջախների վրայ։

Արթուր Վարդանեանը Իսպանիայում ունէր հիանալի ընտանիք։ Ապահովուած էր կարելիի սահմաններում։ Սերտ կապեր էր պահպանում Հայաստանի դեսպանատան հետ Մադրիդում և թուրքատեաց-ադրբեյջանաեաց ֆրանկոյական-կուսակցութեան երիտասարդ ու հայասէր ղեկավարների հետ, որոնք կարող էին մեծ օգուտ բերել Մայր Հայրենիքին և հայ արդար դատին։ Սակայն, դժբախտաբար, հայկական 25,000 անդամ հաշուող գաղթօջախը, որ վերջին տասնամեակում «համալրուել» էր քրեական հեղինակութիւններով և նրանց մանկլավիկ «գողական»ներով, երևում էին իրենց մէջ են ներգրաւել այս խիզախ երիտասարդին, համոզելով «նալոկ»ներ պարտադրել և «փող հաւաքել» մեծահարուստ և յարգուած հայերից, շահագործելով «Հայոց Վահան»ի չափազանցուած «սխրագործութիւնները» կամ «Արեւմտեան Հայաստանի կառավարութեան» ցնդաբանութիւնները, մինչև անձագրեր վաճառելով ու հսկայական գումարներ շորթելով իբր թե բռնագրաւուած հայրենիքում ազատագրական պայքար ծաւալելու (միայն համակարգիչներով...) և այլ խաբեբայական ծրագրերով։

Օգտագործելով Հայաստանում ծայր առած ժողովրդային դժգոհութիւնը քրէածին «աստղ»երի

հանդէպ, «Ձագոննի» քրէական աշխարհի չյայտարարուած և անվերջանալի պատերազմը ևս միլիոնաւոր փողեր է խոստանում իբր թէ արհեստավարժ մարդասպաններին, Ռուսաստանի թէ ԱՄՆ-ի ծագումով բազմազգ օլիգարխների կողմից: Այնպէս որ նրանց համար հեշտ է մոլորեցնել ազգային հերոս դառնալու մարմաջ ունեցող Արթուր Վարդանեանի նմաններին, որոնց արկածախնդրութիւնը հանգեցրեցին այսպիսի ողբերգութեան, պատճառ դառնալով մեղաւոր թէ անմեղ մարդկանց ձերբակալման, խայտառակութեան, Մերձաւոր Արևելքում թէ Կովկասում տիրող այս ճգնաժամային օրերին: